13-րդ շաբաթ

Թեմա՝ «Շաբաթվա ամփոփում»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ի՞նչ եք արել դուք անցնող շաբաթվա ընթացքում:

2. Ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել անցնող շաբաթվա ընթացքում:
3. Ե՞րբ է տեղի ունեցել դեպքը:
4. Որտե՞ղ է կատարվել դեպքը:
5. Ի՞նչ հանգամանքներում է տեղի ունեցել դեպքը:
6. Ովքե՞ր են իրադարձության մասնակիցները / կազմակերպիչները:

7. Ինչպե՞ս ենք մենք տեղեկացել դրա մասին:
8. Ի՞նչ ազդեցություն է ունեցել իրադարձությունը աշխարհի/երկրի/ընթերցողների վրա:
9. Որքանո՞վ է աննախադեպ տեղի ունեցածը:
10. Ի՞նչ կապ ունի իրադարձությունը ձեզ հետ:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

լուրեր	բացահայտումներ
նորություններ	շնորհանդեսներ
միջոցառում	հիշարժան օրեր
ծնունդ	անակնկալ
մահ	երկար սպասված
բնական աղետներ	ուրախալի
հայտնագործություններ	տխուր
հանցագործություններ	կարևոր

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ՝

Ես իմ օրը սկսում եմ մարմնամարզությամբ: Անում եմ այն նախագծերը և ընտանեկան նախագծերը, որոնք հանձնարարություն եմ ստանում: Ընտանիքիս հետ կամ ֆիլմ եմ դիտում, կամ՝ խաղ խաղում: Ինքս ինձ կրթում եմ մարզվել ամեն օր: Օրվա ազատ ժամանակս տրամադրում եմ տարբեր տեսանյութեր նայելուն և (մեկ-մեկ) խաղալուն: Ընտանիքով խաղում ենք Blokus:

Մյուսներին առաջարկում եմ խաղալ կամ զբաղվել իրենք քույրերի կամ եղբայրների հետ: Համացանցից շատ նյութեր չեմ կարդում: Ավելի

շատ տեսանյութեր եմ դիտում: Կարդում եմ եմ Ռաֆայել Սաբատինիի «Նավապետ Բլադի ոդիսականը»: Ես նայել եմ այս ֆիլմերը՝ Առյուծ արքան, Առաջ, Թագուհին Կատուեից, Գրինչ, Ճաղատ դայակը, Նապաստակ Ջոջոն և այլն:

Աղբյուր՝ levonghalamqaryan.wordpress.com/2020/04/04/թե-ինչ-եմ-արել-այս-շաբաթ/

Բնագրի նմուշ 2՝

Ներկայացնեմ ապրիլի 20-24 շաբաթվա պատումը:

Այս շաբաթ նույնպես տեսադասեր ենք անցկացրել, կատարել ենք առարկայական հանձրարարություններ: Ես դասերս պարտաճանաչ եմ կատարում: Գիտե՞ք, մեր ընտանիքի սիրած սեղանի խաղերից է շախմատը: Ես և հայրիկս խաղացինք շախմատ:

Պարզ է, որ հայրիկս հաղթեց, բայց ես չեմ ընկճվում, քանի որ հասկանում եմ, որ ամեն անգամ, հայրիկիս հետ շախմատ խաղալով, մի նոր բան եմ սովորում:

Ասեմ, որ ամեն օր ընտանիքիս հետ ժամանակ եմ անցկացնում: Քնից վեր եմ կենում, հագնվում եմ, լվացվում եմ, սանրվում եմ, նախաճաշում և դասերս եմ կատարում: Ընթացքում մի փոքր խաղում եմ պլանշետով, իսկ հետո ընտանիքիս հետ բազում խաղեր ենք խաղում, իրար հետ ընտանեկան ֆիլմեր ենք դիտում:

Աղբյուր՝ petrosyanemma.wordpress.com/category/մայրենի/page/2/